ՅԱԿՈԲ ՊԵՏՐՈՍԵԱՆ
Բանասիրական գիտ. թեկնածու

ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆԸ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ

ԺԹ դ. 60-70-ական թուականներին արեւմտահայութիւնը ապրում էր ընկերային-քաղաքական ու մշակութային զարթօնք՝ կապուած Արեւմտեան Հայաստանում նոր յարաբերութիւնների ներթափանցման, հայութեան ազգային-ազատագրական պայքարի գաղափարախօսութեան, լուսաւորական շարժման ձեւաւորման եւ ազգային սահմանադրութեան ընդունման հետ: Այդ զարթօնքը բուռն արտայայտութիւն էր գտնում Կ. Պոլսում (նաեւ Զմիւռնիայում), որտեղ հայութիւնը կազմում էր մօտ երկու հարիւր հիսուն հազար մարդ եւ այնտեղ համախմբուած էր արեւմտահայ մտաւորականութեան սերուցքը: Պէտք է նշել, որ բուն երկրի բնակչութիւնը հեռու էր սահմանադրական ոգորումներից եւ համարեա անհաղորդ էր պոլսահայութեանը համակող ազգային խանդաւառութեանը, եթէ նկատի չունենանք «Արծուի Վասպուրական» եւ «Արծուիկ Տարօնոյ» պարբերականների գործունէութիւնը: Այս հանգամանքը քաջ գիտակցում էին Յ. Սվաճեանն ու նրա համախոհները, երբ պահանջում էին Սահմանադրութիւնը գաւառ տանել: Ինչպէս գրում է Յակոբ Սիրունին. «Սահմանադրութեան առաջին սերունդը մեծ յեղաշրջում մը ըրեր էր Պոլսոյ Երեսփոխ. ժողովին 140 ձայներէն 20-ը գաւառին տալով...»: Այսքանով գաւառի խնդիրը սպառում էր: «Յետոյ երկրորդ սերունդ մը եկաւ, որ նոր ճիգ մը փորձեց. լոյս տանիլ գաւառը»[1]: Այս ճիգը նշանաւորուեց Վանում ու Տարօնում Մ. Խրիմեանի ու նրա զինակիցների ազգային-լուսաւորական գործունէութեամբ, 80-ականների սկզբներին Միացեալ ընկերութեան կողմից բուն երկրում կրթական հիմնարկներ բանալու, լուսաւորութեան գործը հունի մէջ դնելու ջանքերով:

Արեւմտեան Հայաստանի հոծ գիւղացիութեան եւ արհեստաւորութեան շահերը արտայայտում էին գաւառահայ մտաւորականները, որոնց առաջնորդը Մկրտիչ Խրիմեանն էր: Նրանք աւելի մօտ էին կանգնած ժողովրդին, աւելի լաւ էին ճանաչում բնակչութեան հոգսերը, հայ գեղջուկի եւ արհեստաւորի հետ իրենց ուսերին տանում էին ազգային ու ընկերային անարդարութիւնների ամբողջ բեռը եւ, որ ամենակարեւորն է, ապրում ու գործում էին երկրում, ուստի եւ նրանց ձեռնարկումները, թէեւ համեստ ու նաեւ տեղական նշանակութիւն ունեցող, բայց շատ աւելի գործնական ու օգտակար էին: Ժողովրդական լայն խաւերի հետ ունեցած այդ սերտ կապը, նրանց արմատական շահերի հետեւողական պաշտպանութիւնը ազգային-պահպանողական գաղափարախօսութեանը հաղորդում էին լուսաւորական-ժողովրդավարական գծեր:

Այս հենքի վրայ հստակօրէն ուրուագծում է Խրիմեան Հայրիկի՝ իբրեւ հոգեւոր, ազգային ու հասարակական գործչի վիթխարի դիմապատկերը: Խրմեանի հայրենանուէր բեղմ-

1 «Հայրենիք» ամսագիր, 1924, էջ 111:

նաւոր գործունէութիւնը հայ ժողովրդի՝ կեռմաններով եւ լուսաւոր դրուագներով հարուստ պատմութեան շուրջ կէսդարեայ ժամանակաշրջանի ամենանշանակալից էջերից է: Նրա մեծ անհատականութիւնը հրապարակ իջաւ ԺԹ դարի 50-ական թուականներին՝ կարծես պատմութեան անհրաժեշտութեան թելադրանքով, եւ համաժողովրդական ճանաչման ու մեծարանքի արժանացաւ տարօրինահայութեան կողմից՝ հորջորջուելով «Հայրիկ» մականունով:

Խրիմեանը արեւմտահայ անուանի մտաւորականներից թերեւս առաջինն էր, որ իր գործունէութեան ասպարէզ ընտրեց հայ բնաշխարհը, նրա նախաձեռնութիւնների նպատակը զարկուած ու զրկուած հայ գյուղացին էր, հասարակ խաւերի բարօրութիւնը, լուսաւորութիւնն ու ազատագրութիւնը, նրան առաջադիմութեան շաւիղ դուրս բերելը: 1869 թ. Պոլսի պատրիարք ընտրուելու առթիւ երդման խօսքում Խրիմեանն ասել է. «Ես երդումս կատարած եմ արդէն Հայաստանի մէջ, Մշոյ դաշտի մերկ եւ բոկոտն զաւակացս առջեւ, հարստահարեալ ժողովրդիս»:

Խրիմեանի առաջին լուրջ քայլը եղաւ «Արծուի Վասպուրականի» հրատարակումը 1855 թ. Սկիւտարում: Թերթի շուրջ հաւաքուած Հայաստանի մտաւորականութեանը Խրիմեանը կոչում էր «արծուասէր», որ խօսում ու խորհում էր «միայն հայրենեաց յառաջադիմութեան համար»: Սակայն «Արծուի Վասպուրականն» եւս լինելով պանդուխտ, իր քարոզների համեմատ պիտի հանգրուանէր երկրում: 1858 թ. յունուարին Վարագայ վանքի նոր հիմնադրուած տպարանից դուրս եկաւ նրա առաջին համարը, որին «անձկանօք եւ կարօտութեամբ» էին սպասում հայրենիքի զաւակները, երիտասարդութիւնը, որովհետեւ «քաղցեալ են քիմք նոցին ի ճաշակումն հայրենարեր պտղոցն»: Դրանով նուիրագործւում էր Խրիմեանի երազանքը՝ Արեւմտեան Հայաստանում պարբերական մամուլի հաստատումը, որը կոչուած էր լուսաւորելու ընդարմացած մտքերը, հայրենի հողի վրայ դաստիարակելու ժամանակի առաջադիմութեանը եւ ժողովրդի ազատագրութեանը նուիրուած նոր սերունդ:

Նոյն նպատակին է ծառայում նաեւ Խրիմեանի ջանքերով Վարագում բացուած Ժառանգաւորաց ուսումնարանը, որի սաները դարձան առաջին թղթակիցները եւ կազմեցին զաւառահայ մտաւորականութեան կորիզը Վանում:

Աստուածաբանական, կրօնական, բարոյախօսական բնոյթի նիւթերին զուգընթաց թերթը պարբերաբար յօդուածներ էր տպագրում հայ ժողովրդի պատմական անցեալի, քաջազուն նախնիների, մշակութային անուանի գործիչների՝ Մեսրոպ Մաշտոցի, Մովսէս Խորենացու, Եղիշէի, Եզնիկ Կողբացու, Դաւիթ Անյաղթի եւ այլոց մասին:

Միասնական հայրենիքի եւ ազգութեան գաղափարը սերմանելու կոչուած այս յօդուածների կողքին մեծ տեղ էր տրւում ժամանակակից խնդիրներին, որոնք հիմնականում առընչւում էին Ազգային սահմանադրութեանը: Յայտնի է, որ Խրիմեանը սահմանադրութեան ջերմ պաշտպանն էր եւ սկզբնական շրջանում դրա հետ էր կապում հայոց ազգային վերածնութեան ու անկախութեան հեռանկարը: Իր «Ազգային նոր սահմանադրութիւն եւ հայրենասէր հիմնադիրք նորա» յօդուածում նա «Ազգային մեծահատոր մատենագրութեանց» շարքում այն «ոսկեգիր մատեան է» համարում, եւ «Ազգը, հայրենիքը քաղաքականութեամբ կրթելու ու լուսաւորելու համար բուն առաջին միջոցը»[2]: Թերթի «Տեսարանք հայրե-

2 «Արծուի Վասպուրական», 1860, թ. 2, էջ 33:

նի աշխարհայ» բաժինը ծառայում էր երկիրը, ժողովրդի սովորութիւնները, հոգսերը, բառն ու բանը ճանաչել տալուն: Պարբերականն անդրադառնում էր նաեւ արեւմտահայ գեղջուկ զանգուածների կեանքի պատկերմանը, ժամանակի ընկերային խնդիրների արծարծմանը: Գ. Սրուանձտեանցի «Շինական հայոց կեանքն ի Հայաստան» ակնարկը այս առումով լաւագոյն օրինակ է: Հեղինակը ներկայացնում է հարստահարութեան եւ տուրքերի գանձման, դրա հետեւանքով հարկադրաբար պանդխտելու, հայրենի բնօրրանից տարագրուելու պատկերներ, մայրերի ու հարսների տուայտանքները: Պատկերաւոր խօսքը, խոր ապրումը, գիւղացիների վիճակը ճշմարտացիօրէն վերարտադրելը այս ակնարկին տալիս են գեղարուեստական խօսքի արժէք, որը թերեւս 60-ականների երկրի կեանքը պատկերող գործերից մէկը կարելի է համարել: Սրուանձտեանցը հայրենասիրութիւնը համարում է «մի անկշիռ եւ գերյարգոյ առաքինութիւն եւ իսկական բարեաց բուն արմատ»: Իր խօսքն ուղղելով Հայաստանից դուրս ապրող հայերին, որոնց կարծիքով հայրենիքը «որտեղ հաց, այնտեղ կաց»-ն է, նա գրում է. «Բուն հայրենիքը կկայանայ այն տեղին վրայ, ուր մեր դիւցազանց եւ սրբազան հարց յիշատակներն են. ահա այն տեղն է մեր սիրտ...»: Եւ «այս կեդրոնի մէջ» ապրող «հայրենեաց հարազատ ծնունդներն» են, որ նեղ եւ անտանելի վիճակին մէջ անգամ հայրենասիրութենէն ստիպեալ ամենայն վիշտ մինչեւ մահ եւ արիւն յանձն առած՝ մնացեր են պահապան մեր հայրենի յիշատակաց, այնինչ մենք շատերս չկարողանալով դիմանալ՝ ցրուեցանք գնացինք մեր անձին հեշտութիւն գտնել օտար աշխարհները»[3]:

1863 թ. Մշոյ Ս. Կարապետի վանքում լոյս է տեսնում «Լրատար Արծուիկ Տարօնոյ» երկշաբաթաթերթը՝ Սրվանձտեանցի խմբագրութեամբ: Վասպուրականի «Արծուի» թեւերով թռչող Տարօնի «Արծուիկը» հետեւողականօրէն շարունակում է նախորդի աւանդները: Նա լուսաւորութեան գաղափարի իրականացման մէջ էր տեսնում առաջադիմութեան, ինքնաճանաչման միակ ուղին, որը հասցնելու էր նաեւ տնտեսական բարգաւաճման ու, ի վերջոյ, քաղաքական ազատութեան: Թերթը միաժամանակ լոյս էր սփռում Սահմանադրութիւն «նուաճած» հայութեան իրական կացութեան վրայ՝ ընդգծելով լուսաւորութեան սկզբունքի անյապաղ իրագործման կարեւորութիւնը Հայաստան աշխարհում: Առաջնորդողներից մէկում ներկայացնելով գաղթավայրերում ապրող հայութեան, նոյնիսկ ունեւորների յարափոփոխ, անհեռանկար կացութիւնը եւ շեշտելով, որ Պոլիսը հային հայրենի չէ ու չի կարող լինել, աւելին. այն հայաստանցիների կեանքը սպառող սպանդարան է, ուր Կեսարիայից, Ակնից, Վանից եւ այլ գաւառներից գաղթած բազմաթիւ գերդաստաններ մի քանի սերունդ ապրելով՝ շիջանում, մարում են, մյուս կողմից՝ բնօրրանը լցում է քրդերով, չերքէզներով՝ Սրուանձտեանցը կոչ է անում տարաշխարհի հայութեանը վերադառնալ հայրենիք եւ շենացնել այն[4]: «Մենք Ստամպոլու ոսկիներով չենք կարող հարստանալ, մեր մէջ ունենալու ենք գործարաններ կտաւի, երկաթի, բամբակի, ձիթհան հունդերու, շերամի... շաքարի եւն եւն իրաց»[5]:

«Արծուիկը» խարազանում է ժողովրդի կենցաղում տեղ գտած յետամնացութիւնը, սնոտիապաշտութիւնը, տգիտութիւնը, եսապաշտութիւնն ու նիւթամոլութիւնը: Թերթի ընթեր-

3 «Արծուի Վասպուրական», 1861, թ. 3(«Հայրենասիրութիւն եւ հայրենիք»):
4 Տե՛ս անդ, 1864, թ. 30:
5 Անդ, թ. 31:

ցողները ըմբռշխնում էին նաեւ բանահիւսութեան նմոյշները կարդալու հաճոյքը: Այստեղ է երեւի առաջին անգամ տպագրուել այսօր երգուող Անտունին «Վոշիկներու երգ» վերնագրով, այստեղ են հրապարակուել «Լուսնակն անոյշ, հովն անոյշ» զողտրիկ հովերգութիւնը՝ «Գարնան գիշեր» խորագրով, եւ այլ գեղջկական երգեր, առածներ, ասացուածքներ: Հետեւելով «Արծուի Վասպուրականի» աւանդներին՝ նրա հետ միասին «Արծուիկը», ըստ էութեան, դնում է բանահաւաքչական հզօր շարժման հիմքը, որ դարձաւ գաւառական գրական շարժման կենսատու աղբիւրը՝ կանխորոշելով նրա էական գծերից մէկը: Սա միակ պարբերականն էր, որ 60-ականներին գործում էր երկրում: «Արծուիկը» ընդամենը երեք տարի գործեց, բայց «փոքրիկ հետք մի» ձգեց «դարուս գրականական կամարին ու կարգին մէջը»: Ինչպէս «Արծւոյ» թռիչքը խափանեցին, այնպէս էլ «Արծուիկը» խոցոտեցին, երկուքի շարունակութիւնն ալ վատութեանց եւ մատնութեանց զոհը ընելով»,- գրում է Սրուանձտեանցը: Դարբերաթերթերը խափանուեցին, սակայն գաղափարական շարժումը, որ սկզբնաւորել էին Մ. Խրիմեանը եւ Գ. Սրուանձտեանցը, շարունակուեց: Երկրի մտաւորականութեան ու ժողովրդի համար շուտով բարեպատեհ առիթ ներկայացաւ աւելի բարձր ու ազդեցիկ իր ձայնը լսելի դարձնել: Առիթը Տարօնի առաջնորդ Մկրտիչ Խրիմեանի՝ Կ. Պոլսի պատրիարք ընտրուելն էր (1869 թ., սեպտեմբերի 4):

Խրիմեանը աշխատեց ազգային ղեկավար մարմինների գործունէութեանը մի այնպիսի ուղղութիւն տալ, որը համապատասխանէր բնաշխարհի ժողովրդական լայն խաւերի շահերին, սահմանադրութեան սկզբունքները գործնականում իրականացնելուն, տեղական շահագրգռութիւնները ժողովրդական հետաքրքրութիւն ներկայացնող խնդիրներին ստորադասելուն: Խրիմեանի գործնական քայլերը, առաջարկները, որ ուղղուած էին բուն երկրի հոծ զանգուածների շահերի պաշտպանութեանը, դժգոհութեան տեղիք էին տալիս Պոլսի ազգային շրջանակներում: Նրան նոյնիսկ ամբաստանում էին իբրեւ հակասահմանադրականի: Ահա թէ ինչու մեծ երգիծաբան Յակոբ Պարոնեանը, նկատի ունենալով Ազգային ժողովի ատենապետ Ստ. Ասլանեանին՝ գրում է. «Իւր ատենապետութեան օրով էր, որ յաջողեցաւ Խրիմեանը վար առնել՝ սահմանադրութեան կէտերը, ստորակէտերը, բութերը չգործածելուն համար...»[6]: Չնայած ներքին տարաձայնութիւններին՝ Խրիմեանը ստեղծում է գաւառահայերի հարստայարութիւններն ուսումնասիրող յանձնաժողով, որը, առաջին անգամ լինելով, կազմում է մի տեղեկագիր, ուր յանգամանօրէն լուսաբանում են Հայաստանի գաւառներում տիրող անօրինականութիւնները, զեղծումները, հայութեան անիրաւուած վիճակը: Ազգային ժողովում քուէարկելուց յետոյ այն ներկայացնում է Բ. Դռանը:

Վերը շարադրուածից պարզ է դառնում, որ արդէն 60-ական թթ. արեւմտահայ իրականութեան մէջ որոշակիօրէն ուրուագծուել էր մի նոր մտայնութիւն, որը ձեւաւորում էր իբրեւ նոր գաղափարախօսութիւն՝ իր առանձնայատուկ կողմերով: Այդ առանձնայատուկը գիւղացիական-լուսաւորական ժողովրդավարութիւնն էր:Հետագայում՝ յատկապէս Բեռլինի վեհաժողովից յետոյ, այդ գաղափարախօսութիւնը որդեգրում է նաեւ թուրքական բռնատիրութեան դէմ քաղաքական-ազատագրական պայքարի ուղղութիւնը: Այս առումով խորիմաստ է հնչում Մ. Խրիմեանի «երկաթէ շերեփի» գաղափարը եւ վճռական ու համոզիչ՝ Սրբ-

6 **Յակոբ Պարոնեան**, Ընտիր երկեր, գիրք 1-ին, 1954, էջ 213:

ուանձտեանցի՝ «Հայաստանի մէջ է բուն հայկական խնդիրն, եւ մեք Պեռլինի մէջ կորոնենք զայն» հաւատամքը:

Գաղափարական այս հենքի վրայ էլ, բնականօրէն, կեանքի կոչուեց բուն երկիրը (գաւառը) գրականութեան մէջ արտացոլելու պահանջը, երկրի գիւղացիական զանգուածների կեանքը, կենցաղը, հոգեւոր արժէքները, բնութեան հրաշալիքները պատկերող գրականութիւնը, որի ռահվիրաները եղան հէնց իրենք՝ Խրիմեանն ու Սրուանձտեանցը՝ այս ասպարէզում նոյնպէս դրսեւորելով իրենց բազմակողմանի տաղանդը:

Դեռ 1850-ին հրատարակած «Հրաւիրակ Արարատեան» չափածոյ գրուածքում Խրիմեանը աշխարհի չորս կողմերում ցրուած հայ ընթերցողին տանում է Հայաստանի նուիրական վայրերը, ելեւէջում պատմութեան կածաններով, ցոյց տալիս երկրի իրական կացութիւնը՝ նրա մէջ հայրենիքի ճշմարիտ սիրոյ հուրը արծարծելով: Ջերմ հայրենասիրութեամբ են շնչում նաեւ բարոյախօսական «Դրախտի ընտանիք» (1876 թ.), «Սիրաք եւ Սամուէլ» (1878 թ.) ստեղծագործութիւնները, ուր յորդորում է ամուր պահել ընտանեկան աւանդական սրբութիւնները, որովհետեւ «ազգն ընտանեկան արդարութեամբ կը բարձրանայ եւ ընտանեկան մեղքով կը նուազի»[7], ցոյց է տալիս, որ ժողովուրդն է «երկրին կեանք տուող ոգին», որ արդար վաստակի եւ հարստութեան աղբիւրը «երկիրն է, հողն է եւ այն բեղմնաւորող մարդուն աշխատութեան ձեռքն է», որ պէտք է ապաւինել ազգային կրթութեանը, միաբանութեանը:

1877 թ. հրատարակւում են Հայրիկի կրակուած ու վշտարեկ սրտով գրուած «Վանգոյժ» եւ «Հայգոյժ» երկերը՝ Վանի հրդեհի եւ Բագրեւանդի գաւառում քրդերի կազմակերպած քստմնելի կոտորածի տխուր պատկերներով: Ժողովրդին հասած ծանր աղետների համար վշտահեծ տառապանքով առնեցուն էջերում արտայայտուել է թուրքական բռնակալութեան «կարծրակուռ խարազանի դէմ հեղինակի զսպուած զայրոյթը, հայութեան տոկացող ոգու փառաբանումը, միաժամանակ՝ անսահման խոնարհ համբերութեան դատապարտումը. «կը դատիմ զքեզ, թէ այդչափ սրրկանաս եւ աղարտես մարդկութեան ազատ պատիւ», «սոսկ լալով ու ողբերով եթէ շաղախենք մեր հայրենեաց հող՝ հայրենիք չշինուիր»: Ազատութեան, հայրենիքի վերաշինութեան համար պէտք է պայքարել, դեն նետել սրրկութեան լուծը, սեփական ձեռքերով դարմանել սեփական վէրքերը, մերժել այն աշխարհը, ուր «ազատ ձայնով եւ ազատ գրչով» լալու իրաւունք չկայ, ուր «լացն եւս ազատութիւն չունի»: «Վանգոյժում» Խրիմեանը յանգում է այն եզրակացութեան, որ քանի դեռ «անգէն, անեղջիւր, անասպար կապրինք», աղետները անպակաս կլինեն. պէտք է նետուել աշխարհն ալեկոծող «յեղափոխութեան աւազանին» ջրերի մէջ. դա է փրկութեան ուղին. «ցանկալի ազատութիւն առանց զոհի եւ արեան» հնարաւոր չէ: Խրիմեանը դատապարտում է աշխարհի զորեղներին, տիրակալներին, որոնք «Արեւելեան խնդրի պատրուակով իրենց շահի համար անգօր ու փոքր ազգերին ճնշում են, ոտնահարում»:

Մ. Խրիմեանը գրել է նաեւ քաղաքական-հրապարակախօսական աշխատութիւններ («Ժամանակ եւ խորհուրդ իւր», «Թ-ազաւորաց ժողով», «Ծրագիր բարենորոգմանց» եւ այլն), բանաստեղծութիւններ, որ ամփոփուած են «Վերջալոյսի ձայներ» ժողովածուում, «Ողբացող Խորենացին» քերթուածը եւ այլ բնոյթի գործեր, սակայն գրականութեան պատմութեան մէջ նրա մուտքը նշանաւորւում է առաւելապէս «Պապիկ եւ Թոռնիկ» երկով(1894 թ.), որը

7 «Ամբողջական երկեր Խրիմեան Հայրիկի», Նիւ Եօրք, 1929, էջ 402:

պարունակում է կենդանի ու վառ պատկերներ Վասպուրականի գիւղական իրականութիւնից. կենցաղի ու սովորոյթների նկարագրութիւններ, բնութեան անզուգական տեսարաններ, ժողովրդական խօսք ու զրոյցներ, փիլիսոփայական իմաստութիւններ ժամանակի կեանքի ու աշխարհի մասին: Այն չնայեած բովանդակում էր 60-70-ականների գաղափարական միտումները, սակայն արձագանքում էր նաեւ դարավերջի հրատապ խնդիրներին: Աւելին, իբրեւ գրական երեւոյթ, նրա երեւան գալը համընկնում էր «գաւառական գրականութեան զարգացման նոր փուլին, որ նշանաւորում էր անցումը դէպի զուտ գեղարուեստական գրականութիւն: Կարելի է ասել, որ «Պապիկ եւ Թոռնիկը» տասնիններորդ դարավերջին առաջադիմող «գաւառական գրականութեան՝ դէպի գեղարուեստական գրականութիւն անցման փուլի վերջին, ամփոփիչ արտայայտութիւնն է:

Հեղինակի հաւաստմամբ «Պապիկ եւ Թոռնիկ»-ի նիւթը քաղել է «Վասպուրական երկրի շինական ժողովրդի ծաղիկներէն»: Երկի «Առ շինական ժողովուրդս հայոց» նախամուտքը ինչ-որ չափով յիշեցնում է «Վէրքի» առաջաբանը: Բնորոշ է, որ Հայրիկը դժգոհում է քաղաքի «իմաստասէր, մտաւորական» դարձած գրողներից, որոնք գրքեր չեն գրում գիւղացիների կեանքից, նրանց համար: Դիմելով ընթերցողին՝ նա գրում էր. «Պապիկի միակ նպատակն ի՞նչ էր, որ այս փոքրիկ գիրքը շարադրեց քեզ համար, որպէսզի դու կարդաս, իմանաս ու ճանչնաս քո նշանակութիւն, ճանչնաս ու զգաս միանգամայն քո խեղճ կեանք ու վիճակ»: Նա ցաւով է նշում, որ նոյնիսկ գիւղական երիտասարդութիւնը կրթութիւն ստանալով, շատ դէպքերում՝ կիսատ-պռատ, մոռանում է իր ծնողավայրը, գիւղացու հոգսերը եւ ապաստանում քաղաքներում: Գրողը յորդորում է շինական ժողովրդին, որ նա սիրի հայրենատուր հողն ու դաշտը եւ երբէք չբաժանուի նրանից: Եւ Պապիկը թոռանը պսակում է «հողին ու մաճին, գութանին եւ հողագործութեան հետ»: Նա պէտք է ուխտի անքակտելի պահելու այդ պսակը. «Ահա կը դնեմ քո գլուխ ցորենաբոյսի ցողուններէն հիւսուած այս գեղեցիկ պսակ, թող վկայ լինին մեր մշակներ, հոտաղներ եւ մեր լծկան գոմշուկներ եւ եզներ»: Ամեն ինչ կարելի է ձեռք բերել, բայց «եթէ զրկուիս քո ժառանգած հողէն, էն ժամանակ Պապիկի տուն եւ օճախ կը քանդուի»: Սա հեղինակի խորագնայ կանխագուշակումն է՝ փիլիսոփայական երանգով ու խորհուրդով իմաստաւորուած:

«Պապիկ եւ Թոռնիկը» Խրիմեանի պատգամն է հայ ժողովրդին, հայ գեղջուկին՝ անթառամ պահելու սէրը հայրենական հողի նկատմամբ, ապահովելու աշխատանքին ու հողագործութեանը, ուսմանն ու կրթութեանը, որոնցով միայն կարող է արգասաբեր լինել քրտնաթոր վաստակը: Ամբողջ ստեղծագործութիւնը անսահման ջերմութեամբ է շնչում հայրենի երկրի ու ժողովրդի նկատմամբ: Մեծ խորհուրդ են պարունակում հայրենախօսիկ Խրիմեանի հետեւեալ տողերը. «Թէ մեռնիմ երթամ գերեզման եւ այլեւս չկարեմ խօսիլ ձեզ հետ կենդանի բարբառով ու գրով. ահա կը թողում ձեզ գիրս իբրեւ մշտախօս կտակ ու յիշատակ. որոյ միակ նպատակն է, որ հայն իր հայրենատուր հողէն չբաժանուի, զի իր սեփական ժառանգութիւն է դրախտի երկիր» եւ՝ պէտք է «գործել զերկիր եւ պահել»[8]: «Պապիկ եւ Թոռնիկը» ըստ Յակոբ Օշականի «հողին պատմութիւնն է, կեանքը»:

Լինելով համոզուած գիւղացիական-ժողովրդական գործիչ, եւ ելնելով «աշխարհիս պալատներուն հաստատութեան հիմն ու խարիսխ շինական ժողովրդոց խրճիթն է» եւ

8 «Ամբողջական երկեր», էջ 402:

«ժողովուրդն է բուն աշխատութեան եւ երկրին կեանք տուող ոգին» հաւատամքից՝ Խրիմեանը երկրի բարգաւաճման հիմնական պայմանը համարում էր ժամանակի պահանջներին համապատասխան երկրագործութիւնն ու արհեստագործութիւնը, ժողովրդական լայն զանգուածների կրթութիւնն ու լուսաւորութիւնը, ընտանեկան աւանդական բարքերի պահպանումը՝ ի հակակշիռ եւրոպական եկամուտ յոռի սովորութիւնների, մարդկային շիտակ եւ առաքինի ընթացքը, քաղաքակրթութեան նուաճումներին համընթաց քայլելը, հայրենիքի բարօրութեան համար անդուլ գործելը: Իհարկէ, այնպիսի յետամնաց, կրօնական մոլեռանդութեամբ տառապող եւ կամայական բարքերով յայտնի երկրում, որպիսին Թուրքիան էր, որի անսահմանափակ գերիշխանութեան տակ էր գտնւում Հայաստան աշխարհը, քաղաքական-ընկերային , կրթական բարեշրջութեան հասնելը ուտոպիա, բարի երազանք էր, որ դարեր շարունակ ուղեկցել է հայ առաջադէմ մտաւորականութեանը, բայց ինչ որ մեզ համար թանկ է ու պատմութեան մէջ մնայուն, դա Մկրտիչ Խրիմեանի անշահախնդիր նուիրումն է ու հսկայական ջանքերը՝ խավարից դուրս կորզելու հայրենիքը, քաղաքակրթելու ժողովրդին, հասնելու ազգային անկախութեան:

Գաւառական գրական շարժումը, որի հիմքերը դրել էին Մ. Խրիմեանն ու Գ. Սրուանձտեանցը, նոյն նպատակին էր ծառայում: